Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
20.02.2024 թ. թիվ 27Ա որոշմամբ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2023 թվականի 1-ին եռամսյակ – 2023 թվականի 4-րդ եռամսյակ)

2023 թվականի 1-ին եռամսյակից մինչև 2024 թվականի 1-ին եռամսյակն ընկած 1 տարվա ընթացքում ՀՀ-ում գնաճային միջավայրն էականորեն մեղմվել է: 12-ամսյա գնաճը կտրուկ նվազել է տարվա առաջին կեսին՝ երկրորդ կիսամյակից ձևավորվելով զրոյական մակարդակի շուրջ: Գնաճային նման զարգացումներին հիմնականում նպաստել են արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ճնշումների զգալի թուլացումը և տարեվերջին անգամ թույլ գնանկումային ազդեցությունները, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացված դրամավարկային քաղաքականությունը:

Հաշվի առնելով մի կողմից՝ զգալիորեն դանդաղող 12-ամսյա գնաճը, իսկ մյուս կողմից՝ դեռևս պահպանվող բարձր պահանջարկի և գնաճային սպասումների գործոնները, 2023 թ. առաջին կիսամյակում՝ մինչև հունիս, ԿԲ-ն քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ: Հունիսից մինչև տարեվերջ, արտաքին հատվածից գնանկումային ազդեցությունների փոխանցման հետևանքով գնաճի շարունակական նվազման և ներքին տնտեսությունում աշխատաշուկայից ածանցվող գնաճային ճնշումների որոշակի չեզոքացման պարագայում, ԿԲ-ն աստիճանաբար թուլացրել է դրամավարկային պայմանները՝ իջեցնելով քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 1.5 տոկոսային կետով:

Արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունների և ԿԲ-ի կողմից իրականացված զսպողական դրամավարկային քաղաքականության արդյունքում հաշվետու ժամանակահատվածում թե՛ ընդհանուր և թե՛ բնականոն գնաճն արագ տեմպերով նվազել է: Այսպես՝ 12-ամսյա գնաճը հաշվետու ժամանակահատվածում նվազել է մոտ 9 տոկոսային կետով և 2023 թ. վերջին կազմել է -0.6%, իսկ 12-ամսյա բնականոն գնաճը նվազել է շուրջ 10 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով -0.4%: Այնուամենայնիվ, դիտարկվող ժամանակահատվածում, ՀՀ-ում պահպանվող բարձր պահանջարկի և գնաճային սպասումների պայմաններում, ծառայությունների և որոշ ապրանքների գները ճշգրտվել են համեմատաբար դանդաղ տեմպերով:

1. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2023 թ. 1-ին եռամսյակի ծրագրում ներկայացված սցենարի հիմնական դատողությունների համաձայն՝ բարձր գնաճային միջավայրն առաջիկայում արագ տեմպերով նվազելու էր՝ հիմնականում պայմանավորված արտաքին շուկաներից փոխանցվող գնաճային ճնշումների էական թուլացմամբ, իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության և դրամի արժևորման ազդեցություններով: Այնուամենայնիվ, բարձր պահանջարկը և նվազող, բայց դեռևս բարձր պահպանվող գնաճային սպասումները շարունակելու էին նպաստել աշխատավարձերի և առավելապես կոշտ գներով աչքի ընկնող ապրանքների ու ծառայությունների գնաճին: Սպասվող մակրոտնտեսական զարգացումների և իրականացվող դրամավարկային քաղաքականության ներքո 12-ամսյա գնաճը, 2023 թ. կտրուկ նվազումից հետո, միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

Հաշվետու ժամանակահատվածի առաջին կեսին 12-ամսյա գնաճը կտրուկ նվազել է, ինչից ելնելով, 2023 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում արված կարճաժամկետ գնահատականը վերանայվել է ներքևի ուղղությամբ: Տարվա երկրորդ կիսամյակում 12-ամսյա գնաճը հիմնականում ձևավորվել է նախանշված ուղեգծի շուրջ:

Գրաֆիկ 1

Դիտարկվող ժամանակահատվածում 12-ամսյա գնաճն արագ տեմպերով նվազել է, ինչից ելնելով, հաջորդ եռամսյակների կարճաժամկետ գնահատականը վերանայվել է դեպի ներքև



Հաշվետու ժամանակահատվածում, ընթացող աշխարհաքաղաքական երևույթների և պահպանվող անորոշությունների պայմաններում, համաշխարհային և Հայաստանի Հանրապետության հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությունը և պահանջարկը շարունակել են դանդաղել: Այս զարգացումների և այդ երկրներում իրականացվող զսպող դրամավարկային քաղաքականության պարագայում միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտվել է հատկապես պարենամթերքի և էներգակիրների գների էական նվազում, ինչպես նաև համաշխարհային տնտեսությունում գնաճային միջավայրը որոշակիորեն մեղմվել է: Այս պայմաններում արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ճնշումները 2023 թ. առաջին կիսամյակում էականորեն թուլացել են, իսկ երկրորդ կիսամյակում արդեն դիտվել են գնանկումային ազդեցություններ: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ

տնտեսությունում արձանագրվել է սպասվածից բարձր ակտիվություն՝ պայմանավորված գերազանցապես ծառայությունների և շինարարության ոլորտներում արձանագրված բարձր աճով: Տարվա ընթացքում բարձր մակարդակում է պահպանվել նաև համախառն պահանջարկը, որն առաջին կիսամյակում արտահայտվել է հատկապես ծառայությունների ոլորտում դրսևորված արտաքին պահանջարկի էական ավելացմամբ՝ կրելով միջազգային այցելուների, այդ թվում՝ զբոսաշրջիկների, ինչպես նաև ֆինանսական զգալի ներհոսքի ազդեցությունը: Դրական զարգացումներ են արձանագրվել նաև ՏՏ և մշակող արդյունաբերության ճյուղերում՝ արտահայտվելով այդ ոլորտներում արտադրական ներուժի և արտահանման ավելացման միտումներով: Միաժամանակ, միջազգային այցելուների կողմից ներկայացված մեծ պահանջարկի և արտերկրից ֆինանսական փոխանցումների զգալի ներհոսքի ազդեցությամբ ՀՀ արժութային շուկայում արձանագրվել է դրամի էական արժևորում: Հաշվետու տարվա երկրորդ կեսին դիտվել է արտաքին պահանջարկի որոշակի թուլացում՝ կապված զբոսաշրջության աճի տեմպի դանդաղման հետ, ինչին զուգահեռ զգալիորեն աշխուժացել է ներքին պահանջարկը՝ պայմանավորված մասնավոր սպառման բարձր աճով, որին նպաստել է նախկինում կուտակված խնայողությունների ծախսումն ու եկամուտների շարունակական ավելացումը:

Նման զարգացումների հեռանկարով ԿԲ-ն, 2023 թ. առաջին կիսամյակում ներմուծված պարենային ապրանքների մասով դիտվող գնանկումային երևույթներին զուգահեռ դեռևս պահպանվող բարձր պահանջարկի ու աշխատաշուկայից ածանցվող գնաճային ազդեցությունների պայմաններում, մինչև հունիս քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ՝ պահպանելով հարաբերականորեն խիստ դրամավարկային պայմանները:

2023 թ. երկրորդ կիսամյակում, թե՛ արտաքին և թե՛ ներքին ապրանքահումքային շուկաներում գնանկումային միտումների շարունակման և գնաճային գործոնների զգալի չեզոքացման հեռանկարով, ԿԲ-ն նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 1.5 տոկոսային կետով՝ տարեվերջին սահմանելով 9.25%: Միաժամանակ, հաշվի առնելով գնաճային սպասումների վերաբերյալ պահպանվող բարձր անորոշությունները և տնտեսությունում ներքին պահանջարկի գործոնների ընդլայնման ու գնաճային սպասումների ավելացման ռիսկերը, ԿԲ-ն հիմնականում նախապատվությունը տվել է դրամավարկային պայմանների աստիճանական թուլացմանը՝ արտահայտելով պահանջարկի հետագա կարգավորման և գնաճային սպասումների կայունացման ապահովման հետևողականություն:

Հաշվետու ժամանակահատվածում ռուս-ուկրաինական հակամարտության շարունակման, ինչպես նաև Արցախի շուրջ իրադարձությունների սրման հետևանքով ՀՀ ֆինանսական շուկայի տատանողականության ավելացման պայմաններում ԿԲ-ն հետևողական է եղել ֆինանսական շուկայում իրացվելիության համարժեք կարգավորման նպատակին հասնելու հարցում, ինչի արդյունքում շուկայական տոկոսադրույքները հիմնականում ձևավորվել են գործառնական նպատակի՝ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Նույն գործոններով պայմանավորված՝ արտարժույթի շուկայում դիտվել է որոշակի տատանողականություն, որն առանձին իրավիճակում արտահայտել է շուկայի խաթարման հնարավոր ռիսկեր, ինչին ԿԲ-ն արձագանքել է շուկայում իրավիճակային մասնակցությամբ՝ ֆինանսական շուկայի

բնականոն գործունեության ապահովման նպատակով: Միաժամանակ, արագացող ներքին պահանջարկի պայմաններում 2023 թ. ընթացքում դիտվել է ֆիզիկական անձանց սպառողական և հիպոտեկային վարկավորման բարձր աճ:

Գրաֆիկ 2

ԿԲ գործիքների և կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքների վարքագիծը



Ամփոփելով նշենք, որ դիտարկվող մեկ տարվա ընթացքում արտաքին հատվածից գնաճային ազդեցության էական թուլացման, իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության և դրամի արժևորման արդյունքում, 12-ամսյա գնաճը նվազել է 8.9 տոկոսային կետով և 2023 թ. վերջին կազմել -0.6%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս արագ տեմպերով նվազել է և տարեվերջին ձևավորվել -0.4% մակարդակում: Գնահատվում է, որ 12-ամսյա ընդհանուր գնաճն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև զգալիորեն կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

2. ԳՆԱՃԻ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2023 թվականի ընթացքում արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ազդեցությունները թուլացել են, միևնույն ժամանակ, ներքին տնտեսությունում, պահանջարկի աճով պայմանավորված, գնաճային միջավայրն արտահայտվել է որոշ ապրանքների և ծառայությունների գների բարձր մակարդակների պահպանմամբ (տե՛ս գրաֆիկ 3):

Այսպես՝ ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով 2022 թ. առաջին եռամսյակի վերջից միջազգային պարենային շուկաներից փոխանցվող գնաճային ազդեցությունները, հատկապես՝ «Հացաբուլկեղեն և ձավարեղեն», «Մսամթերք», «Կաթնամթերք», «Յուղեր և ճարպեր» ապրանքախմբերում, 2022 թվականի վերջից սկսել և 2023 թվականի ընթացքում շարունակել են զգալիորեն թուլանալ: Դա պայմանավորվել է համաշխարհային և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվության շարունակական դանդաղման համատեքստում համաշխարհային տնտեսությունում համեմատաբար թույլ պահանջարկի և հարաբերականորեն զսպող դրամավարկային պայմանների ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում որոշ ապրանքների (արևածաղկի ձեթ, հացահատիկ, շաքարավազ և այլն) գների նվազմամբ: Միաժամանակ, 2023 թվականի ընթացքում էներգակիրների միջազգային գների նվազումներն իրենց նշանակալի ազդեցությունն են ունեցել ՀՀ վառելիքի շուկայի գների վրա, ինչը, սակայն, նշանակալիորեն չեզոքացել է հաշվետու ժամանակահատվածի վերջում՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական զարգացումների հետևանքով վառելիքի համաշխարհային գների աճով:

Պետք է փաստել նաև, որ դեռևս պահպանվող բարձր արտաքին պահանջարկին զուգահեռ դրսևորվող ՀՀ դրամի արժևորումը ևս նշանակալի ազդեցություն է ունեցել ներմուծված ապրանքների գների նվազման վրա:

ՀՀ ժամանած միջազգային այցելուների մեծ հոսքով և ներկայությամբ պայմանավորված՝ ՀՀ տնտեսությունում ձևավորված բարձր պահանջարկը գնաճային ճնշումներ է ավելացրել տեղական արտադրության ապրանքների և հատկապես ծառայությունների մասով, ինչի պարագայում ճշգրտվել են գնային հարաբերական կոշտություններ ունեցող մի շարք ծառայությունների (բնակարանի վարձակալություն, ռեստորաններ և հյուրանոցներ, վարսավիրանոցային, բժշկական, ֆինանսական, փոստային ծառայություններ) սակագները, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պահպանվել են բարձր մակարդակներում և միայն վերջում ցուցաբերել որոշակի նվազման միտումներ: Վերջինիս, ինչպես նաև շինարարության աճին զուգահեռ երկարաժամկետ սպառման ապրանքների նկատմամբ պահանջարկի աճով:

Մյուս կողմից՝ տարվա ընթացքում ներքին պահանջարկի արձանագրված ավելացմանը հիմնականում նպաստել է մասնավոր սպառման բարձր աճը՝ պայմանավորված նախկինում կուտակված խնայողությունների ծախսմամբ և եկամուտների շարունակական ավելացմամբ, ինչին զուգահեռ դիտվել է նաև սպառողական վարկավորման բարձր աճ: Դա լրացուցիչ գնաճային ճնշումներ է առաջացրել սպառողական շուկայում, որին 2023 թվականի սեպտեմբերից հետո որոշակիորեն նպաստել է նաև Արցախից բռնի տեղահանված բնակչության ներհոսքը Հայաստան:

Գրաֆիկ 3

Հաշվետու ժամանակահատվածում արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ազդեցությունները էականորեն մեղմվել են, ինչի պայմաններում թե՛ ընդհանուր և թե՛ բնականոն գնաճը կտրուկ նվազել է



Բնականոն գնաճի տարրերից «Ծխախոտային արտադրատեսակներ» և «Ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբերի գների աճը, ինչպես և գնահատվում էր, կրել է տարեսկզբին ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխության գնաճային ազդեցությունը հատկապես ծխախոտային արտադրատեսակների մասով: Արտահանման ծավալների հարաբերական կրճատման հետևանքով տեղական ալկոհոլային խմիչքների ավելի մեղմ գնաճը որոշակիորեն զսպել է գնաճային դրսևորումներն ընդհանուր ապրանքախմբում:

Բացի վերը նշված գործոններից՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբից գնաճի դանդաղմանը զգալիորեն նպաստել է սեզոնային պարենային ապրանքների գնանկումը՝ պայմանավորված 2022 թվականի առաջին կեսի ոչ բարենպաստ եղանակային պայմանների ազդեցության աստիճանաբար չեզոքացմամբ, իսկ արդեն 2023 թվականի երկրորդ կեսից՝ նկատելի տաք եղանակային պայմաններով:

Հատկանշական է նաև, որ 2022 թվականի առաջին կիսամյակում կարգավորվող ծառայությունների սակագների աճի երկրորդային գնաճային ազդեցությունները, որոնք դրսևորվել են հատկապես 2022 թվականի երկրորդ կիսամյակում, ամբողջությամբ մարել են 2023 թվականի ընթացքում:

Աղյուսակ 1

Ապրանքախմբի անվանումը	Կշիռը	12-ամսյա գնաճը 2023 թվականի դեկտեմբերին	Նպաստումը տ/տ գնաճին
Բնականոն գնաճ	**73.9**	**-0.4**	**-0.3**
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	8.5	-8.7	-0.7
Միս	10.6	-1.0	-0.1
Յուղեր և ճարպեր	2.9	-20.6	-0.6
Շաքարավազ	0.5	-6.1	0.0
Կաթնամթերք	4.4	-2.9	-0.1
Ալկոհոլային խմիչքներ	2.5	6.0	0.2
Ծխախոտային արտադրատեսակներ	2	11.5	0.2
Հագուստ	2.2	-0.1	0.0
Կոշիկ	1.2	5.1	0.1
Կենցաղային սարքեր	0.6	4.4	0.0
Վառելիք	5.4	2.4	0.1
Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն	1.1	25.1	0.3
Ամբուլատոր ծառայություն	2.6	6.0	0.2
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	1.1	4.5	0.0
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.9	4.0	0.1
Վճարներ բանկերի, փոստային բաժանմունքների ծառայությունների համար	0.8	10.3	0.1
Սեզոնային պարենային ապրանքներ	**11.0**	**-2.9**	**-0.3**
Ձու	1.6	-0.2	0.0
Մրգեր	4.1	0.7	0.0
Բանջարեղեն	5.3	-6.6	-0.3
Կարգավորվող ծառայություններ	**15.1**	**0.0**	**0.0**
Ապրանքների և ծառայությունների այլ խմբեր			
Ներմուծված պարենային ապրանքներ	15.3	-7.9	-1.2
Չկարգավորվող ծառայություններ	17.3	5.6	1.0